

ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ- ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մանկապարտեզում տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը ամենից առաջ կախված է նրանից, թե դաստիարակները որքանով են հաշվի առնում տարբեր խմբերում ընդգրկված երեխաների տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները: Եվ միանգամայն իրավացի են հոգեբաններ Ա. Չապորոժեցը և Վ. Դավիդովը, երբ պրոֆ. Ա. Արկինի «Երեխան նախադպրոցական տարիներին» գրքի առաջաբանում գրում են. «Նախադպրոցական մանկական հիմնարկներում աշխատողները և գրագետ ծնողները պետք է լավատեղյակ լինեն նախադպրոցականի տարիքային-հոգեբանական առանձնահատկություններին, յուրացնեն գիտության կողմից սահմանված տեսական գիտելիքները և դրանցով ինքնուրույնաբար անշեղ առաջնորդվեն երեխաների հետ հաղորդակցվելիս»:¹

Ի. Պողյասնին նկատում է, որ մանկավարժության մեջ «երեխաների տարիքային շրջաբաժանման հիմքում դրվում են մի կողմից նրանց ֆիզիկական և հոգեբանական զարգացման փուլերը, մյուս կողմից՝ այն պայմանները, որոնց մեջ ընթանում է երեխաների դաստիարակությունը»:² Ըստ այդմ էլ մա կատարում է հասունացող սերնդի տարիքային հետևյալ շրջաբաժանումը.

1. մանկիկային տարիք՝ մինչև 1 տարեկանը.
2. մինչնախադպրոցական տարիք՝ 3-6 տարեկանը.
3. նախադպրոցական տարիք՝ 4-5 տարեկանը.
 - ա) կրտսեր նախադպրոցական տարիք՝ 3-4 տարեկանը.
 - բ) միջին նախադպրոցական տարիք՝ 4-5 տարեկանը.
 - գ) ավագ նախադպրոցական տարիք՝ 5-6 տարեկանը.
4. կրտսեր դպրոցական տարիք՝ 6-10 տարեկանը.
5. միջին դպրոցական (դեռահաս) տարիք՝ 10-15 տարեկանը.
6. ավագ դպրոցական (պատանեկան) տարիք՝ 15-18 տարեկանը:

Համառոտակի անդրադառնալով «ավագ նախադպրոցական տարիքի» երեխաների հոգեբանական առանձնահատկություններին, մի տարիք, որի դերը անձի հոգևոր զարգացման մեջ անչափ բարձր են գնահատել ականավոր շատ մանկավարժներ:³

Անձի ձևավորման գործընթացում բարձր գնահատելով ավագ նախադպրոցականի դաստիարակվածության դերը, ականավոր մանկավարժ Ա. Մակարենկոն գրել է. «Մարդու դաստիարակությունը որոշվում է փոքր տարիքում՝ մինչ 5տարեկանը: Թե ինչպիսին կլինի մարդը՝ գլխավորապես կախված է նրանից, թե դուք նրան ինչպիսին եք դարձրել մինչև 5 տարեկանը: Եթե դուք մինչև 5 տարեկանը նրան չդաստիարակեք ինչպես հարկն է, ապա հետո հարկ կլինի վերադաստիարակել»:⁴ Այստեղից բխող գործնական հետևությունը թողնում ենք մանկապարտեզի դաստիարակներին ու ծնողներին, որոնք լավ պիտի իմանան, որ վերադաստիարակելը ավելի դժվար գործընթաց է, քան դաստիարակելը:

Հոգեբանության կարևորագույն սկզբունքներից է գործունեության ընթացքում անձի հոգեկանի զարգացման սկզբունքը, իսկ մարդկային գործունեության հիմնական տեսակներն են խաղը, ուսուցումը և աշխատանքը: Նախադպրոցականի գործունեության առաջատար տեսակը խաղն է, որի ընթացքում էլ զարգանում են երեխաների հոգեկան գործընթացները և անձի հոգեբանական հատկությունները: Ավագ նախադպրոցական տարիքում առաջատար են դառնում հատկապես դերային խաղերը: Մեծերի հետ հաղորդակցվելու, նրանց հետ համատեղ կյանքով ապրելու ավագ նախադպրոցականների պահանջմունքները սկսում են բավարարվել հատկապես դերային խաղե-

¹ *Е. Аркин, Ребенок в дошкольные годы, М., 1968, стр. 3.*

² *И. Подласны, Педагогика, М., 1996, стр. 116.*

³ *Л. Толсто, Соч. в 12-и томах, т. 10, 1963, стр. 537.*

⁴ *Ա. Մակարենկոյի, Ընտանեկան դաստիարակության մասին, Եր., 1985, էջ 166:*

րի ընթացքում: Գեռնա մինչև խաղը նրանք պայմանավորվում են, թե ով ինչ դեր է կատարելու: Ասենք, աղջիկները նկատի են ունենում «մայրիկի», «բժշկուհու», «դաստիարակչուհու», իսկ տղաները «վարորդի», «օդաչուի», «զինվորի» գործառնությունները (պայմանականորեն դրանք կարելի է անվանել սեռադերային խաղեր): Պրոֆ. Վ. Մուխիան գտնում է, որ դերային և կանոններով խաղերը օգնում են ավագ նախադպրոցականներին ստանձնելու մեծերի փոխհարաբերությունները, նրանց «սոցիալական դերը»: Անդրադառնալով ավագ նախադպրոցականների խաղերի առանձնահատկությանը, նա գրում է. «Ավագ նախադպրոցականների խաղի բովանդակության մեջ էական է դառնում կանոններին հետևելը: Առաջին պլանի վրա են մղվում ինքնասահմանափակումը և հարաբերությունների հաստատման գործում դրսևորվող կարգապահությունը: Խաղի ընթացքում երեխաները հեշտությամբ են համաձայնեցնում իրենց գործողությունները, ենթարկվում են միմյանց, փոխադարձ զիջումներ են կատարում, քանի որ այդ ամենը մտնում է իրենց վրա վերցրած դերերի բովանդակության մեջ»:⁵

Կանոններով ու դերային խաղերի ընթացքում ձևավորվում ու զարգանում են ավագ նախադպրոցականների բարոյական ըմբռնումներն ու գնահատումները: Հենց բարոյական առումով էլ դրանք գնահատում են իրենց խաղընկերների արարքներն ու գործողությունները: Նրանց սովորական գնահատումներից են «Այդպես չի կարելի», «Այդպես վատ է», «Այսպես լավ է», «Այդպես չի կարող լինել» և այլն:

Պրոֆ. Լ. Բոժովիչը իր «Անձնավորությունը և նրա ձևավորումը մանկական տարիքում» աշխատության մեջ ավագ նախադպրոցականի հոգեբանական նորագոյացումներից է համարում նրա արարքներում ու գործողություններում միջնորդավորված բարոյական մոտիվների առաջացումը: Ըստ այդմ էլ նրանք «լավ» են համարում խաղի այնպիսի կանոններն ու բարոյական նորմերին համապատասխանող ընկերների արարքներն ու գործողությունները, իսկ «վատ», եթե խախտվում են խաղի կանոնները կամ բարոյական նորմերը: Ընդ որում, ավագ նախադպրոցականի համար բարոյական նորմա է դառնում ընդհանուրի համար կատարվող աշխատանքը: Ավագ նախադպրոցականի աշխատանքային գործունեության մեջ «կարևորը սեփական գործունեությունը հասարակական դրդապատճառներին ենթարկելու, ուրիշների օգուտի համար գործել կարողանալու ունակությունն է» (Բոժովիչ):

Խաղի հետ միասին ավագ նախադպրոցականի հոգեկան զարգացման ընթացքում էական դեր է խաղում նաև արդյունարար գործունեությունը՝ նկարելը, ծեփակերտումը, ապլիկացիան, տանը կամ մանկապարտեզում աշխատանքային առաջադրանքների կատարումը և այլն: Հենց այդ արդյունարար գործունեության ընթացքում էլ զարգանում են նախադպրոցականի ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, մտածողությունը և հոգեկան մյուս գործընթացները: Ավագ նախադպրոցական տարիքում հոգեկան այդ գործընթացները դառնում են առավել կամաձին, քան տարիքային նախորդ շրջանում: Եթե կրտսեր և միջին նախադպրոցական տարիքում գերակշռող է չկանխամտածված ուշադրության և հիշողության դերը, ապա ավագ նախադպրոցական տարիքում ձևավորվում է ուշադրությունը կամաձին կերպով ավելի ու ավելի տևականորեն կառավարելու ընդունակություն: Սկսում է զարգանալ նաև խոսքային իմաստավորված հիշողությունը, որն իր կատարած դերով արդեն վեց-յոթ տարեկանում հավասարվում է պատկերավոր հիշողությանը: Ավագ նախադպրոցականի հիշողության զարգացման գործընթացում բեկման պահ է հանդիսանում հատուկ մենեթիկական գործողությունների ծագումը, այսինքն՝ երեխան իր առջև մտապահման խնդիր է դնում և սկսում է համապատասխան հնարներ կիրառել. օրինակ՝ լավ մտապահելու համար երեխան բառերը մի քանի անգամ կրկնում է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ավագ նախադպրոցականներն ունեն հարուստ երևակայություն: Այն տպավորությունն է ստեղծվում, որ կարծես երեխան միաժամանակ ապրում է երկու աշխարհում՝ իրական աշխարհում և իր երևակայության աշխարհում: Նկատի ունենալով դա, առանձին հետազոտողներ երևակայությունը համարեցին նախադպրոցականի համար բնորոշ գործունեության ձևերի աղբյուրը: Սակայն հոգեբանական հատուկ հետազոտությունները ցույց տվեցին, որ նա-

⁵ Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր., 1977, էջ 65:

խաղաղոցականի երևակայության զարգացումը գործունեության խաղային, նկարչական և այլ տեսակներին տիրապետելու ոչ թե պատճառը, այլ հետևանքն է: Իհարկե, նախադպրոցականի երևակայության պատկերները պայծառ են, ակնառու, հուզականությամբ հագեցված, սակայն այնքան էլ մտաչելի չեն վերահսկողության ու կառավարման համար: Երևակայության զարգացման հիմնական ուղղությունը գիտակցական մտադրություններին աստիճանաբար ենթարկվելը և որոշակի մտահղացումների իրականացման միջոց դառնալն է:

Դպրոցական համակարգված ուսուցման անցնելու կապակցությամբ պետք է շեշտադրել հատկապես ավագ նախադպրոցականի խոսքի և մտածողության աննախընթաց զարգացումը: Հարստանում է նրա բառապաշարը՝ հասնելով 3000-4000 բառի: «Նախադպրոցականի հոգեբանությունը» աշխատության մեջ պրոֆ. Վ. Մուխինան ներկայացնում է ավագ նախադպրոցականի խոսքի զարգացածությունը, տվյալ առարկայի, նկարի, իրադարձության հասկանալի նկարագրությունը, մտքի ու խոսքի ընթացքի տրամաբանվածությունը, այս կամ այն երևույթի, կանոնի հստակ բացատրությունը և այլ որակներ: Նա ընդգծում է, որ խոսքի հետ անխզելի կապի մեջ զարգանում է ավագ նախադպրոցականի մտածողությունը, որը դպրոցական ուսուցման անցնելու կարևոր հոգեբանական նախադրյալ է: Ըստ Վ. Մուխինայի, ավագ նախադպրոցականները «պետք է կարողանան առանձնացնել շրջապատի երևույթների էական կողմերը, համեմատել առարկաներն ու երևույթները, նկատել նման և տարբեր հատկանիշները, ճիշտ դատողություններ անել, գտնել երևույթների պատճառները, ընդհանրացումներ կատարել»:⁶ Խոսքը ոչ միայն հաղորդակցման, այլև մտածողության միջոց է: Հոգեառան ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մտավոր-ինացական գործառնությունների բոլոր տեսակների կատարելագործումը հենվում է երեխայի խոսքի զարգացման վրա: Բառերը, իրենցում ամրապնդելով երեխայի կողմից յուրացված կոնկրետ, զգայական չափօրինակները, սկսում են «մասնակցել մտածողության գործընթացներին, դառնում են մտապատկերների ու հասկացությունների կրող, և տրամաբանական դատողությունների կատարման հնարավորություն է ստեղծվում: Խոսքն ուղղություն է հաղորդում երևակայության աշխատանքին, խնդիրներ է դնում ուշադրության ու հիշողության առջև: Խոսքի միջոցով երեխան խտացված ձևով ստանում է մարդկության ձեռք բերած փորձը, ընդ որում նաև հենց հոգեկան գործունեության փորձը»:⁷

Ավագ նախադպրոցականի մտածողության զարգացման գործընթացում վճռական դեր են կատարում տանը կամ մանկապարտեզում կազմակերպվող կարճատև ուսումնական պարապմունքները: Մի շարք հոգեբանների (Ա. Չապորոժեց, Դ. Էլկոնին, Վ. Դավիդով և ուրիշներ) հետազոտությունները ցույց են տալիս, որ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մտածողության շատ առանձնահատկություններ, որոնք տարիներ առաջ այդ տարիքի անկապտելի նշաններ էին համարվում, իրականում բացատրվում են երեխաների կյանքի ու գործունեության պայմաններով և փոփոխվում են «նախադպրոցական ուսուցման բովանդակության ու մեթոդների փոփոխման միջոցով: Օրինակ, երեխայի մտածողության կոնկրետությունը, տվյալ կոնկրետ դեպքին նրա կապվածությունը անհետանում և իրենց տեղը զիջում են դատողության ընդհանրացված ձևերին, երբ երեխային ծանոթացնում են ոչ թե առանձին իրերի և դրանց հատկությունների, այլ իրականության երևույթների ընդհանուր կապերի ու օրինաչափությունների հետ: Հինգ-վեց տարեկան երեխաները հեշտությամբ են յուրացնում գիտելիքներ մարմինների որոշ ընդհանուր ֆիզիկական հատկությունների ու վիճակների, զոյության պայմաններից կենդանիների մարմնի կառուցվածքի ունեցած կախվածության, ամբողջի և մասերի փոխհարաբերության, միավորի և բազմության և նման այլ կապերի մասին, և այդ գիտելիքները օգտագործում են իրենց մտածական գործունեության ընթացքում»:⁸

Ավագ նախադպրոցական տարիքը դպրոցական ուսուցման համար երեխաներին նախապատրաստելու ժամանակաշրջան է: Վ. Մուխինան փորձարարական նյութերի հիման վրա ցույց է տալիս, որ ավագ նախադպրոցականները տիրապետում են

⁶ В. Мухина, Психология дошкольника, М., 1975, стр. 231.

⁷ Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, էջ 75:

⁸ Նույնը:

նաև «ուսումնական գործունեության տարրերին. ուսուցումը այս կամ այն չափով մտնում է երեխաների գործունեության բոլոր ձևերի մեջ»: Նա միաժամանակ նկատում է, որ «ավագ նախադպրոցականի համար ուսուցումը հատուկ գործունեություն է դառնում միայն ուսումնական խնդրի առկայության դեպքում, երբ նրանից պահանջվում է ինչ-որ նոր բան սովորել: Ուսումնական խնդիրների առանձնացումը տեղի է ունենում միայն նախադպրոցական տարիքի վերջում»⁹

Նկատի ունենալով ավագ նախադպրոցականի տարիքային-հոգեբանական վերոնշյալ և այլ առանձնահատկությունները՝ մեր հանրապետության հանրակրթական դպրոցի առաջին դասարան են ընդունում 6 տարեկաններին: Ուրեմն այդ առանձնահատկությունները պիտի հաշվի առնեն ոչ միայն ծնողներն ու մանկապարտեզի դաստիարակները, այլև դպրոցների առաջին դասարանում դասավանդող ուսուցիչները:

НЕКОТОРЫЕ ВОЗРАСТНЫЕ-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ СТАРШЕГО ДОШКОЛЬНИКА

___ *Резюме* ___

___ *Л. Мкртчян* ___

Продуктивность учебно-воспитательного процесса зависит прежде всего от того насколько педагоги считаются с возрастными психологическими особенностями детей. В статье описаны те воарстные психологические особенности детей старшего дошкольного возраста (5-6 лет), с которыми должны всегда считаться не только родители и воспитатели детских садов, но и учителя первых классов общеобразовательной школы.

⁹ В. Мухина, *624. աշխ., էջ 234:*